


կասութիւն մ'ունկին, և մագնիսութեամբ ցնացրնելու միջոց մերձաւոր վտանգ իսկ կար անհնց հրանդանալուն։ Եւ այդ անձինը կանխաւ չէին ունեցած ոչ ուղղագրութեան և ոչ ալ լուսնոտութեան հարուածները։ Այս կամ այն կերպով կարելի է առաջ բերել ցունը, բայց յանկարծ վրայ կը հասնի լուսնոտութեան կամ ուղղագրութեան հարուածը, և այնպէս յանկարծ և ուժին կերպով՝ որ մագնիսացուցիչն ու հոն ներկայ եղողներն մեծ յուսահամութեան մէջ կ'իջնան։ Եւ միթէ հրանդը այնքան անմիտ պիտի համարինց՝ որ ինցնաթելազրութեամբ (auto-suggestion) ուղենայ ենթարկել ինցնինը այսպիսի պատահարաց. — արդեօց մագնիսացուցիչն կամ շուրջը զտնուողներէն մին է ասոնց պատճառը. . . . Աշ, տեսրը, ոչ. մագնիսական ցնոյ այսպիսի գդրազդութեանց, այս պատահարաց և այս աղեաց մէջ թելազրութիւնն մասն շոնի¹⁾։

Հարայարելի

Հ. Ս. ՍԱՐԵԱՆ



ԱՅԼԵՒԱՅԼՔ

ՀԻՆ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻ ՀԱՆՈՒԱՆ
ՀԵՌՈԳԻԲ ՄԸ

ԱՅԼԵՒԱՅԼՔ վերջին պրակն (Հոկտեմբեր 1899) հետաքրքրական ձեռագրի մը նկարագրութիւնը կ'ընէր, որ քաղաքաւած էր ողբացեալ Հ. Մինաս Վ. Բժշկեանի « Ճանապարհորդութիւն ի Հենաստան » դրախն (Բազմավկա, անդ. էջ 443-445)։ Խոսուազնինք թէ մենք պարագաներու բերմամբ կարող չենք եղած տեսնելու Հ. Մինասի լիշեալ երկը, առկայն որչափ կրցանք հասկենաց « Հայք Գութերայ » կարեւոր աշխատութեան թարգմանաւար հեղինակ Հ. Աւգերեանի մէջ բերած տուղբէն, Հ. Մինաս « Օտեռայի մէջ » տեսեր է այս ձեռագիւն, որ է « փոքր զբայկ մը եղիպ-

տոսէն բերուած, և հին գերեզմաններէ հանուած »։ Այս առիթի զբայկին մէկ էջն ալ կը ներկայացածի մէջ, « ցուցընելու համար անոր բնանին երկայնութիւնն ու լայնութիւնը և անընթեանի գործ ձեւերը »։ Ասկէ զատ, ծանօթաւթեան մը մէջ ալ կ'ըսաւ, թէ և Այս անգերանինի գորութիւնս, թերեւս ունենայ իրեն պատմական անհրաժեշտ կարեւորութիւնը. և որ մը շատ բանաօրէք երախտապարտ ըլլան թերթիս ընթերցող ու եւ է հնախուզզի մը որ կարող ըլլայ կարգալ զայս ու պարզել » (Բազմ. անդ. էջ 444)։

Մինք, — առանց հետոներն երթալու և մեր աղոտ ընթերցողներուն լարուած երեւակայութիւնը բորբոքվելու, — յայտնենք անմէջապէս, թէ և անընթեանինի » և « անկերծնենինի » ցուցընեա՞ պարզապէս երովկացիքին է, և գրքոյկը՝ պատմական կամ թէ բանաօրիական տեսակետով՝ բոլորովին դուրի է ոպասուած կարեւորութիւնէ։ Որչափ որ նմտնահանութեամբ արտասպուած զատազիր էջին մը բավանդակու. թենէն կրցանք հասկնալ, որոյ կուսին նուիրուած մալթանաց մէկ հատակուառն է այն։

Ահաւասիկ ներկայացընենք հոս նոյն հթագուցերէն էջին ընթերցումն ու թարգմանութիւնը.

ՆՅ.Կ.Փ.Ը.ՌՃ
ԳՒ.Հ.ՀԱՋ.Խ.Ջ
ՀԱ.Ճ.Թ.Ի.Կ.Կ
ԼՃ.Բ.Խ.Ն.Օ.Ց
Ի.Դ.Յ.Խ.Ն.Պ.Ց
Ի.Շ.Շ.Խ.Խ.Խ.Խ
Ճ.Ա.Խ.Ջ.Ա.Խ.Խ
Ե.Գ.Ն.Շ.Խ.Խ.Խ.Խ
Ը.Վ.Վ.Վ.Վ.Վ.Վ
Ը.Վ.Վ.Վ.Վ.Վ.Վ
Կ.Վ.Վ.Վ.Վ.Վ.Վ
Մ.Վ.Վ.Վ.Վ.Վ.Վ
Կ.Վ.Վ.Վ.Վ.Վ.Վ

1. խարա. Ֆեկուր. վալ-
2. դըքի :: ալբօ. զայը-
3. քըլ. . . . վլսնմա . . .
4. . . . լըյա. զալնբալա. սա-

1. Խորաքանչեւր եռակէտը դրուած է մէկ անընթեանինի ատափ տեղ. իսկ հարցական նշանք կը յայտնեն արբակուսական տառերը։

1. Congrès international, և այլն. էջ 104, և այլն.

6. լաթքա. ըսմա. ն'ա.
 6. լըք'ա. զայրմաս'աբքա
 7. յալնա. քուէլու. ամի.
 8. ըը :: Վագքըրու ::
 9. մը. արք. բգղի.
 10. արիէր. քամաթրու(Ար)

Որ կը նշանակէ բռու առ բռու.

1. « Առաջի սիրելի որդի-
 2.. ւոյ քո՛ ոչ ոք կա-
 3. լող է. ի մէջ ...
 4. առանց աղօ.
 5. թից քոց. զի
 6. այն որ.
 7. ամէն օր.
 8. եւ առնէ. Ասոր.
 9. (լոյիցէ) քեզ Ասոր.
 10. ւաճ, որ լինիս (արժանի արբայու-
 (թեամն) »:

Թէրեւու այս զրքուէին ուրիշ մասերը բովան-
 դակն բանապերական տեղեկութիւններ, սա-
 կայն առանց ձեռագիրը տեսնելու չենք կրնար
 այժմէն որոշ գողափար մը յայտնել:

Կ. 8. ԲԱՍՏՈՒԱԾԵՑՆ

դարիս, 3 չոկտ. 99.

Մ Ա Պ, Ն Ի Ս Ա

Ա ԵՐԱԳԱՑՈՒԵԼԻ Հ. Յակոբ Վ. Քո-
 սեմին « Հայք ի Զմբանիք և լշջակյա» (Հայ. Բ.) աշխատութիւնն, որ Զմբանիք վի-
 ճակին քաղաքաց և նոցա Հայ հասարակու-
 թեանց մասին հնակալութիւններ կը պարու-
 նակէ, և այս տարուան իցմիրեանց մցանա-
 կին արժանի հանդիսացած է մասամբ, իր տե-
 սակին մէջ համակրելի գործ մըն է. սակայն
 թող ներսուի մեր - ոչ թէ իբր քննադատ, այլ
 իբր յաւելուած - Մաղլիսայի մասին աւելցնել
 մը քանի տեղեկութիւններ որոնք կարելի է
 ակամայ վրեպած են Հեղինակին ուշադրու-
 թենէն:

Համեմատաբար ուրիշ քաղաքներու՝ յեշեալ
 դժիկն մէջ շատ քիչ խօսուած է Մաղլիսայի
 մասին: Ընդհանուր տեսութիւնն շատ համա-
 ռած եղած է այդ հին քաղաքի մասին, որ ի-
 րաւամբ հնութեանց շեղակյու մ'է: Ի մէջ
 այլոց՝ Մաղլիսայի արեւելակազմը Սիրիլ լերան
 ժայռեն միոյն վրայ քանդակուած պատկերի
 մասին երբէք չի խօսուիր, որոյ վրայ ոչ նուազ

աւանդութիւններ կան ժաղավրդեան մէջ: Ան-
 ցելոյն փառաց ըեկորներէն զատ՝ որ բազմաթիւ
 են, պատմութիւններ մեզ կ'աւանդէ թէ՝ Մաղլ-
 իսիս երբեմն Սամանեան գահաժառական պայա-
 զամանակ Սուլթան Մուրատ Փի (1595) բնակա-
 վայրն եղած է: առ այս կը վկայեն նաև Մու-
 րատիէ և Սուլթանիէ Հոյակապ մէկիթներն:
 Ասոնցմէ զատ կան նաև շատ մ'ուրիշ նշա-
 նաւոր շենքեր, և մզկիթներ, որոց մէջնէն աստ
 մասնաւորապէս կը յիշենք « Ուզու համբ » ն,
 թէ հնութեան և թէ շգեղութեան մասին նշա-
 նաւոր շինուաթիւն մը, որ ի հնութեան յանական
 եկեղեցի էր, ինչպէս գաւթիւն մէջն միւներուն
 վկայ և դուրս դեռ կը տեսնուին խաչը նշան-
 եներ և յանական տառեր. Հետուէն՝ լերան կո-
 ղեն կոթնած այս համին՝ անցրդը եթէ զիտե-
 ւու ԱՀայ քաղաքնի միջնաբերզը կը կարծէ:

Մաղլիսայի Հայ գաղթականութեան մասին
 ո՞ր և համեմատական թուական չի տեսնուիր
 Հ. Գոսեանի աշխատութեան մէջ. թէ և մինչեւ
 ցարդ ենթազուութիւններէ զատ հաստատ ա-
 պացոյցներ չկան թէ՝ Մաղլիսայի Հայերն գըլ-
 խաւորաքար ո՞ր տեղերէն և ո՞ր ատեն զաղթած
 են, սակայն պը. Գ. Շահինեան (բնիկ Մաղ-
 լիսայի) Վարի և Վերի թաղերու եկեղեցեաց
 մէջ պահուած զին ձեռագիրներու յիշատակա-
 րանաց վրայ յենով կը հետեւցն թէ՝ Մաղ-
 լիսայի գաղթականութիւնն միջ դարու Թրքա-
 պարսկական պատերազմերու ժամանակներն
 « կած է, որով ըստ իւր կարեեաց՝ եռադա-
 րեան հնութիւն մէջ է իսկ թէ ո՞ր տեղերէն
 զաղթած են: պը. Հ. Աճառական լեզուաբանա-
 կան օրէնքով Վերի թաղի բնակչաց լեզուական
 հնութեան համեմատելով Խարբերդի զաւա-
 պաբարբարին հետ, այն տեղէն զաղթած ԱՀայ-
 նին կը հետեւցնէ: Գալով Վարի թաղեցոց՝
 տեղացոց գետ և մենք ԱՀայ զաղթականու-
 թիւն ԱՀայ կը կարծենք, թէ և Պարսկատա-
 նի կողմերն ԱՀայ կարծողներ ալ կան:

Մաղլիսայի վարի թաղի դպրոցներու վրայ
 խօսելով Հ. Գոսեան, մանէկու վարժարանին
 համար, կ'ըսէ. « Տակաւին մասնաւոր յիշա-
 տակարան մը չէ հաստատուած, որ պատմէ
 իր հիմարկութիւնը »: Եթէ ներուի մեզ՝ այդ
 մասին համառատ տեղեկութիւն մը տալ աւե-
 լորդ շենք համարիր: 1880ին հիւանդանոցի մը

կառուցման համար ժողովրդին մէջ ընկերութիւն մը կը կազմուի, 1880ին չենքին հիմարեկութիւն կը սկսուի. քէ յետոյ ինչ ինչ պատճաներով - զոր չենք ուզել աստ նշանակել անոններու շուրջը զործ չունենալու համար - և ընկերութեան լուծմամբն, չինութիւնը կ'ընդհատուի և երկար ժամանակ երեսի վրայ կը մնայ. թաղական խորհուրդն նկատելով որ այդ անկատար չէնքն մի քանի տարին պատի փեռնայ բոլորովին, և աղջկանց գարժարանին չենքն թէ առողջապահական տեսակետով և թէ հութեամբ անյարմար մինելուն, 1893ին աղջիկներն կը փոխադրէ արական գարժարանն (եկե-

ղեցոյ պարտէզին մէջի շէնքին). և պէտք եղած պակասներն լրացնելով մանչեն կը փախազուն հրւանդանոցի համար կառուցածիվ յիշեալ չէնքին մէջ, ահա այս պատճառու որ և է յիշատակարան չէ հաստատուած մինչեւ ցարդ :

Լուսաւորչեան գարժարանի (այժմ աղջկանց գարժարան Գայիխանեանց անուամբ) հիւսիսային դրան վրայի արձանագրութիւնն իշշուած է թէ և Հ. Քսենանի գրքին մէջ, բայց հարաւային դրան վրային (չարազրեալ Յավհաննէս գարժապետ պարտիզակցէ) անտես առնուած է, որ հիստեւեալն է.

իմաստութեան այս վեհագոյն տուն եւ տանար Թորգոմեան
ջափրտ եւ զիլսոս ուսմամբ մարզող մերոց մանկանց չայկազեան.
Արդ ի իիմանց նոր կառուցաց եւ յանթական պանծայ աստ
ջամսուն կրկնով սուրբ Գրիգորի Լուսաւորչի յիւր ճակատ
Վարժարանին լուսաւորչեան համան արդեանցն է աղրիւր
Միիրտ բարիմոյն ժողովրդեան եւ առ ուսմուն մեծ իղծ իւր
նոյնական տեղույս նորիրդականը նարտարապեան թովմա
Զրի տքնեցան ի փառ Հայոց Մանիսացեց:

1876

Ի 4 ՄՊԱՅԻ

Մինչեւ 1871 թուրին Մալինիսա աղջկանց գարժարան չէ ունեցած, յիշեալ թուականին Ս. Սիօն եկեղեցոյ ետեւի փաղոցը հիւսանդանոցը համար կառուցուած (1866-67) չենքն յատ կացուած է աղջկանց գարժարանի Գայիխանեանց անուամբ։ - ինչ զարմանալի զուզագիպութիւն, որ հրւանդանոցի համար կառուցեալ երկու չէնքը յետոյ գարժարանի վերածուած են. - և ինչպէս վերը յիշեցինք 1893ին Լուսաւորչեան գարժարանն փոխազուած է։

Եկեղեցոյ պարտէզին մէջ գտնուած նահատակի մասին՝ որ տեղույն շերմեռանդ ժողովրդան ուժատաեղին է, ոյնչ չէ խօսուած, թէ և արձանագրութիւնն յիշուած է, Տեսան

զօրութեամբ արիցացեալ և այն, որ նահատակի կը Կարճ մի կենազրութիւնն է, ասկայն շըրջանակի յիշատակարանն զանց առնուած է, որ է. (աջ թեւի կողմէն սկսեալ).

Նոր հրաշացեալ նահատակս նորոգ շինուած սոյն տապանս յիշատակ է արդեամբ գոյից Տէր Բարաղամ բահմանայիս նաև իդնուկ երեցկնիս եւ Կարապետ նարազատիս, հաւուն իմ Տէր Բարաղամ մին Աստապատույց քահանայիս, որդուոյ նորոց Գրիգորին եւ կենակցոյ իւր Վարդերին, դուք որ կարդայք տուք զողորմն, միով յիշեալ սուրբ հայր մելիս որպահ զի եւ դուք յիշեսչիք անդր առաջի անմահ գառնի։

6. 8.

4. Լուսաւորչեան գարժարանի շինութեան ժամանակ արական գարժարանն հոս փոխազրուեցաւ. մեր յիշուաթիւնն վրիպած է թէ՝

Գայիխանեանց գարժարանն մասնաւոր տեղ մը փոխազրուեցաւ թէ առ ժամանակեալ կերպիւ ցրուեցան անուանիք։

ԿԱՐԵՒՈՐ ՈՒՂՂԵԼԻՔ

544 էջին առաջին սիհակին՝ գարեն սկսեալ երրորդ և չորրորդ տողերը՝ Մի գոյցէ,
Ե՛ իրենք սկզբնաւրովթեամբ, չի կան։